ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ « «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-909-09.09.2024-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 1-ին հոդված**	Առաջարկվում է Նախագծի 1-ին հոդվածում «(այսուհետ՝ Օրենք)» բառերից հետո հանել «3-րդ հոդվածում» բառերը և Նախագծի 1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝ «2-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ. «4. Հանրապետության Նախագահի աշխատակազմում, Ազգային ժողովի աշխատակազմում, վարչապետի աշխատակազմում, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի աշխատակազմում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնային դրույքաչափի	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան լրացումը:	Ընդունվել է:

			հաշվարկման գործակիցը չի կարող գերազանցել 6-ը, իսկ դրանց թվաբանական միջինը՝ 3.5-ը:»:»: Կատարված փոփոխության համատեքստում առաջարկում ենք շտկել նաև հոդվածների համարակալումը, իսկ Նախագծի 14-րդ հոդվածի 1-ին մասը «օրվանից» բառից հետո լրացնել «բացառությամբ սույն օրենքի 1-ին հոդվածի, որն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից» բառերով:		
2.	***ՀՀ կառավարություն***	**Նապագծի 11-րդ հոդվածի 2-րդ կետ**	Առաջարկվում է նախագծից հանել 11-րդ հոդվածի 2-րդ կետով «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 25-րդ հոդվածում լրացվող 3.1-ին մասը, ինչպես նաև նույն կետի 3.3 մասից հանել «Այն դեպքում, երբ պետական պաշտոն եւ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձին ամենամյա արձակուրդը ամբողջությամբ տրամադրվել է մինչեւ ամենամյա արձակուրդի առնվազն կեսը օգտագործելու իրավունքը ձեռք բերելը, լրացուցիչ միանվագ արձակուրդային վճարը տրվում է տվյալ աշխատանքային տարվա վերջում: Ընդ որում» բառերը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

3.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 14-րդ հոդված**	Առաջարկվում է նախագծի 14-րդ հոդվածի 2-րդ մասում «սահմանված» բառից հետո հանել «լրացուցիչ միանվագ արձակուրդային վճարը պետական պաշտոն եւ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձին ամենամյա արձակուրդի առնվազն կեսը օգտագործելու իրավունքը ձեռք բերելուց հետո տրամադրելու, » բառերը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է: